



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՍՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱՅ ԸՆԲԱՐԹ 23 ՅՈՒՆԻՍ 1866

ԹԻՒ 784

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՄՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԻԱՅ 23 ՅՈՒՆԻՍ

Գաղղիոյ Սոնիթէօր անուն պաշտօնական լրագիրը Յունիսի 9-21 ամսամիջոցը հրատարակեց, «Թէ Լատինական յանձնաժողովը կրնայ թշնամութեան գործքերէ հեռու կենալ մինչև հինգ օր, և այս պայմանաւորով լրջնալու՝ կամ պիտի ընդունի կամ պիտի մերժէ զպայմանները որ առաջարկուած են իրեն» խաղաղութեան համար»:

Ճշգրիտ չլիտցուի թէ որոնք են յիշեալ պայմանները. սակայն ի՞նչ լրագրաց գործնական հաւատ ընծայելու ըլլա՞մք, կերէի թէ Բրուսիան նախ կը պահանջէ որ Լատինական գերմանական դաշնակցութեան ելլէ, և ուրիշ նոր դաշնակցութիւն մի կողմից նախադաշնութեամբ Բրուսիոյ կառավարութիւնը, որ օտար ահաբեկեանց առջև պիտի ներկայացնէ զգերմանական ազգը և Լորրորդը՝ կը պահանջէ որ Լաւալէի-Նոլթմանի դքսութիւնները ինչպէս նաև Բրուսիոյ զօրաբանակէն դրուուած քանի մի նահանգները Բրուսիոյ միապետութեանը հետ միաւորուին: Լորրորդը կը պահանջէ որ Լատինական յանձնաժողովը զճարելու պատերազմին ծախքը, կամ նոյն ծախսը փոխադրէ՝ աւստրիական Սիլեզիան Բրուսիոյ տայ: Բրուսիան ուրիշ պահանջներ ան ունի, կըսեն, բայց ասոնք պիտի տեսնենք:

Իսկ Բրուսիոյ դաշնակից Իտալիան միայն Վենետիկը առնելով զոչ չըլլար, այլ կուզէ որ հարաւային Թիւրքիոյ ալ իրեն տրուի. ուր մինչև ցայսօր Կարիպալտիին կամաւոր զինուորները՝ թէպէտև շատ աշխատեցան այլ տալիսին ներս չկրցան մտնել:

Ինչպէս կը տեսնուի, այս պայմաններուն վիճակը թուականները շատ են, բայց Գաղղիացոց կոյսերը հորդութիւնը և մեծ ազդեցութիւնը կրնան վերահասել զանոնք:

Կարգուին Լորրորդին հրամանացը համաձայն իւր հօրեղծորդիին՝ Կարգուին իշխանը յատուկ պաշտօնիւ Վիլթիօր-Լամանոնէլ թագաւորին քովը յուղակեցաւ: Եւ Պէրլինի Գաղղիոյ դեսպան մօսիւ Պէրլինէթին իշխանին թագաւորին քով գնաց յատուկ պաշտօնիւ: Ինչպէս զեսպանը Բրուսիոյ թագաւորին քովէն մեկնելով Վենետիկ գնաց և Լատինիոյ կայսեր ներկայացաւ: Հասարակօրէն կը յուշացուի թէ Կարգուին կայսեր ձեռքը եղած այս բանախօսութիւնները որուն գործակից են Սիւսիան և Լաւալէան, յաջող վախճան մի պիտի ունենան և հաջողութիւնը պիտի չուշանայ ի գործ դրուելու:

Յունիսի 8-21 ին ծովային մեծ պատերազմ մի տեղի ունեցաւ Լորրիական ծովուն մէջ Լիսա կոչուած Գալաթիոյ կղզւոյ մօտ: Եւ իտալացոց կողմէն հասած լուրերուն նայելով՝ Լատինացիները յաղթուեցան և պարտաւորեցան ի Լաւալէան կղզին ապաստանուելու: Իսկ Լատինացոց կողմէն տարածուած լուրերուն նայելով՝ իտալացիք չարաչար յաղթուեցին և միևնոյն պատերազմին մէջ:

Յայտնի է որ իտալացիները կը վարանին ընդունելու զՎենետիկը՝ Կարգուին կայսեր ձեռքէն և կուզէին որ իրենց զօրութեամբը գրաւէին զայն:

Այս խնդրոյն վրայօք՝ փարիզի Լա Ֆրանս լրագիրը հետեւեալ խորհրդածութիւնը կընէ.

«Իտալիան կը վարանի ընդունելու զպայմանները որով Վենետիկը թող տրուած է. իտալացիները կը ստամախն որ ժամանակ չունեցան Լատինացիներէն զինու զօրութեամբ առնելու զայն: Չէին ուզեր որ Վենետիկը իրենց թող տրուի, այլ կուզէին զենքով տիրել անոր»:

«Ինչու որպէս անձնական պատուոյն այս խնդրոյն քով, ուրիշ խնդիր մըն ալ կայ, որ պէտք էր

իտալացոց ուշադրութիւնը գրաւել: Կուզէ՞ք գրուել Վենետիկաց իրաւանց և օգտիցը համար»:

«Երկայ պատերազմին նպատակը՝ իտալական զօրաբանակին քաջութիւնը յայտնելն է, այլ Վենետիկի անկախութիւնը: Վենետիկը երկար ժամանակէ ի վեր իւր ազատութեանը կը սպասէ և կը փափաքի միաւորիլ իւր հասարակաց հայրենեացը հետ: Իսկ իտալացիները սխալ հաշիւով մը՝ կարծելով թէ իրենց պատուոյն կը պահեն, կուզեն երկարեցնել այս մեծ վործը և դուրսէ վտանգի մէջ դնել զայն նոր ճակատամարտութեանց պատահարներով»:

«Իտալիան կը պահանջէ որ իւր յաղթական սուրով տիրած ըլլալ Վենետիկին, բայց տեսնենք թէ Վենետիկը այս բանը կուզէ: Եւ իւրաքանչիւր ժամ որ իւր ազատութիւնը կը յաջողեցնէ, միթէ յաւոյ և զոհողութեան ժամ մը չէ: Իտալիան կուզէ մեծ ու յաղթական ըլլալ, բայց Վենետիկը կուզէ ազատ ըլլալ: Ուստի այս երկու փառասիրութեանքն որք միտոյն տիրելու է: Հարկաւոր օգուտը որն է: Իտալիոյ անձնական պատիւն է, թէ Վենետիկի ազատութիւնը»:

«Վենետիկ տիրել Վենետիկին. բայց այս բանը ոչ միայն իւր բնական փափաքը երկարած է, ոչ միայն անոնց ապագայ ճակատամարտութեանց ահազին խաղուն մէջ խաղալէ, այլ և փրկանքներով ծածկել է Վենետիկի երկիրը»:

«Ի՞նչ ուրեմն իտալական զօրաբանակը պատերազմի թող պաշարէ քաղաքը թող ինչպէս իրեն դերը: Ի՞նչ իտալական նաւաբաժնի յարձակի Տօմերուն քաղաքին վերայ. սակայն պիտի չկրնայ տիրել անոր: Բայց միայն կործանելով զայն, Իտալական ուժերը Վենետիկի պալատները և յիշատակարանները պիտի քանդեն և վերջապէս երբոր անոր տիրելու ըլլան, փրկական կոյտ մի եղած պիտի ըլլայ այն: Ի՞նչ է այս բանն է որ ճշուած Վենետիկը կը զոհուի ապառիտ Իտալիայէն: Բայց յայտնաւորեալ մտածելու չէ՞ նաև Վենետիկի ժողովուրդը՝ զոր պատերազմին հարուածը ազգապատկան վերջին աստիճանը հասուցած պիտի ըլլայ և այլն, և այլն: Ուրեմն թող Իտալիան քիչ մը նուազ իրեն վրայ մտածէ, և քիչ մը աւելի Վենետիկի իրաւանց և օգտիցը վրայ»:

«Այս փրկաւետ խորհրդածութիւնը պիտի համոզէ իտալացիները, թէ աւելի ազէի է ազատել այսօր զՎենետիկը իտալական իշխանութեամբ այն անձին, որ 1859ին ազատեց Վենետիկը Իտալիայէն, քան թէ վաղը պատերազմին ահազին դէպքերուն թող տալով՝ կարելի չըլլալ անուի զայն բայց միայն կործանուած, քանդուած և գուցէ մշտնջենաւոր կերպիւ կորսուած»:

Ե.Օ.Գ.Ե.ՅԻՆ

Գահիրէէն հայազգի երեսիներէն մէկը հետեւեալ նամակը յուղարկած է մեզ ի հրատարակութիւն.

Յարգոյ խմբագիր Արշալոյս լրագրոյ,

Այս անգամ Գահիրէի ազգային ժողովոյն արձանագրութեան ընդօրինակեալ երկար յօդուած մի կը դրկեմ խնդրելով՝ որ ձեր պատուական օրագրոյն միջոցաւ Հայ ազգին աջաց առջեւ դնելու բարեհաճիք:

Այս արձանագրութեան պիտոր տեսնէք որ Բիքեսոն Մկրտիչ-Պէյի աներթակ Պատմաճեան Գառնիկ անուն անձը՝ Բիքեսոն անգուցեալ Գրիգոր աղայի բոլոր գոյքը իւր եղբոր Մկրտիչ-Պէյին սեպակաւեցնելու համար ինքն գործիք ըլլալով, մինչ ցարդ եղածները բաւ ջնամարեմէն զինի՝ ճիմակ ալ անաստուածաբար կեղծ են խաբղալ թղթի շինելով:

Զորս որք են անտէր Բիքեսոն Գրիգոր աղայի գաւաւունքը այսինքն Մկրտիչ-Պէյի եղբորդիքը մօրեմերկ բողբոյս կաշխատի:

Ազգային ամեն ազգասէր խմբագիրները կարծեմ պիտոր հաճին այս արձանագրութեանը ի պաշտօնէ ի յոյս ընծայել, ոչ երբ մեկու մը անուան անպատուութիւն բերելու մտօք, այլ որպէսզի բոլոր ազգը մոյն են ազգային վարչութեանը այժմէն լաւ ճանաչէ այս խաբղալ թղթին կեղծ ու անընդունելի ըլլալը, որպէսզի օրին մեկն ալ երբ երբ յերեւան ելլէ, գործադիր հեղինակը ամօքն գետին անցնի:

Եւ ինչպէս որ Բիքեսոն Մկրտիչ-Պէյ իւր եղբոր որդեոց հասուցած վնասուց են քանի մը անմարտի գործոցը համար կառավարութեան կողմէն դատատանի տակ ըլլալուն՝ զկրնար կրկին քաղաքը մտնել, այսպէս ալ իր աներթակ Գառնիկի այս խաբղախութեան գործիք ըլլալուն, ստիկանութեանը իրեն հետամուտ է, եւ մինչեւ ցայսօր այսպիսի հեռագրերով փնտռուելէն զինի դեռ չգտնուելուն, կը կարծուի որ մոյնպէս այս ալ փախած է, որով իր ըրած այս խաբղախութեանը ինքնիրեն հաստատութիւն տուաւ:

Ներքեցի, յարգոյ խմբագիր, մեր այս անգամուան երկար յօդուածին, քեւ լաւ գիտցէք որ զորս անտէրութեանը որք օրհնութեանցը պիտոր արժանանաք ոյ՛ այժմ ի Վենետիկ կը գտնուին:

Գահիրէ, 27 Յունիս (9 Յուլիս) 1866:

Պատմէն արձանագրութեան՝ Գահիրէի ազգային ժողովոյն 1866 Յունիս 12ի նիստին:

Երկու օր յառաջ ուրբաթ օրը ժողով չգումարուելով՝ քանի մը կարեւոր գործեր ի կախ մնացած էին. ուստի որոշուեցաւ այսօր՝ նոյն գործոց համար արտաքոյ կարգի ժողով մը ընել. և երբ անդամոց մեծագոյն մասը ներկայ էր, այսինքն Գրիգոր Էփենտին Երկայան, Նուշան աղան Երազպետ, Յովհաննէս աղան Ռուսման, Մկրտիչ աղան Գառնիկ և Սարգիս աղան Գառնիկեան, յայտնաւորեցին Նշան աղան ժողովոյն ներկայացաւ և աղբրագիր մը մատուց 1866 Յունիս 12 թուականաւ: Աղբրագիրը կը յայտնէր թէ Պատմաճեան Գառնիկ անուն փրկաւետ առաջնորդ գեր. Գառնիկ և պիտորպիսի կերպով և Մկրտիչեան Մարտիրոս վարժապետին ձեռամբ կեղծ նամակ մը գրել տուած է ան: Մկրտիչ-Պէյ Բէյիկեան 1277 Շապան 4 թուականաւ հանգուցեալ Գրիգոր աղա Բիքեսոնին ժառանգութեանը վերաբերեալ խնդրոյ մը վրայ, և նոյն կեղծ նամակին Մկրտիչ վարդապետ և վարդապետ ստորագրութիւնը գրած է նոր թուականաւ: Նշան աղան այս իր առաջարկութիւնը Մարտիրոս վարժապետին գրութեամբ և Մկրտիչ վարդապետին խոստովանութեամբ կը հաստատէ:

Աղբրագիրը կարգադրուելէն յետոյ ժողովս քննութեան տուաւ: Եւ նախ Գառնիկ աղային հրաւիրանաց տուան մը գրեց որ իսկոյն ժողովոյն ներկայանայ. յետոյ Մարտիրոս վարժապետը կանչեց և անոր հրապարակաւ տէր կարապետ քահանային ձեռամբ երդում ընել տալէն յետոյ՝ որ ճշմարտութիւնը խօսի, տուաւ իրեն վերոյիշեալ աղբրագիրը որ կարդայ:

Այնուհետեւ ժողովս հարցուց Մարտիրոս վարժապետին թէ որքեօք որեւիցէ ազգականութիւն մը ունի՞ կամ Գառնիկ աղային՝ կամ Մկրտիչ-Պէյին և կամ Նուշան աղային և կամ տիկին Մկրտիչ-Պէյին հետ, և կամ ուրիշ առեւտրական կամ այլ յարաբերութիւն մը նոյն անձանց հետ: Որոց պատասխանեց թէ, ամենեւին ոչ ազգականութիւն և ոչ ուրիշ յարաբերութիւն մը ունի յիշեալ անձանց հետ, (և ստորագրութիւնը գրաւ իր այս պատասխանին տակ):

Հարցումս:—Ահա Նշան աղային մատուցած աղբրագիրը կարգադրեց, ուստի անոր վրայ ինչ որ գրուէր ուղղութեամբ պատասխանեցէք:

Պատասխան :—1866 Մայիսին Պատմաճանաչման Գառնիկ աղան իս առաւ Հոֆէլ Ռոյալ Երանդան իր սենեակը տարաւ և թաղաղաւ մը թուղթ և թէպէտ մը տալով սէնէ 1277 Դապան 1 թուղթ ուղեց որ անոր մաքորը քաշեմ. երբոր քանի մը տող գրեցի հանգուցեալ Բէիզեան Գրիգոր աղային ժառանգաւորաց համար ըլլալը իմանալով և Գարրիկէ սրբազանին բերնէն եղածը իմանալով այս ինչպէս բան է ըսի, քեզի պէտք չէ, գրէ և երբոր թղթին առջի երեսը լընցաւ և միւս երեսը դարձուցի, յիշեալ Գարրիկէ սրբազանին կնիքը նոյն թղթին տակը կոխուած տեսնելու թուղթը ձեռքէս ձգեցի այս ինչպէս բան է որ ձերմակ թղթի վրայ գրութեանն առաջ կնիքը կոխուեր է : Իսովաճառ Գառնիկը սրբողելով մը, ինչ ըսել կուզես վարժապետ, դուն իս հիլլիպազ մարդ կըկարծես, չէ չէ, Գարրիկէ սրբազանը անձնապէս տկարութիւն ունենալով և քովը գրագիր չըլլալով կնիքը կոխեց և թէպէտ թուաւ որ հայերէն գիտցողի մը գրել տամ :

(Ստորագրութիւն Մարտիրոս վարժապետի :)

Հարցում : 1277 Դապան Աին օրը դուն ո՞ր կզտնուէիր :
Պատասխան : Թէպէտ այն օրերը ձիւզի կամ Հէլվանի կողմերը կըգտնուէի բայց աղէկ մը չեմ յիշեր թէ նոյն օրը Եգիպտոս էի թէ դուրսը : (Ստորագրութիւն :)

Հարցում :— Ինչո՞ւ համար յիշեալ գիրը գրելիք Մայիսի 4ին 'ի վեր ազգին շիմացուցիք, և ինչ առիթով Գարրիկէն Նշան աղային յայտնեցիք այդ դէպքը :

Պատասխան : Նշան աղան Նուպար փաշային կողմէն այս ժառանգութեան վերաբերելի գործերուն փոխաւորը կարգաւորել գիտնալով անոր յայտնելու յարմար դասեցի :

(Ստորագրութիւն :)

Սոյն միջոցին սպասաւոր Եսգուպը՝ որ Գառնիկին գիրը տարած էր՝ վերադարձաւ, ըսելով թէ՝ Գառնիկ աղան գիրը կարդաց բայց տկարութիւն պատճառով գալ չուզեց, և ո՛չ իսկ ուղեց իր մերժումը գրով ընել. միայն յաւելցուց թէ ինքը այսօր Ալըզեան խաչիկ աղային հարսանեացը պիտի ելլեայ՝ որուն ինք կըբաշարէ, և վերադարձին ժողովոյս կըհանդիպի, եթէ ժողովը մինչև նոյն ատեն տեղ :

Հարցում առ Մարտիրոս վարժապետ : Գառնիկին հրամանով դրած նամակը լրացուցի՞ր մինչև կնիքը թէ կիսատ թողուցի՞ր. և թէ ինչ էր յիշեալ նամակին բովանդակութիւնը :

Պատասխան : Այո՛ մինչև կնիքը ամբողջ գրեցի և այս էր նոյն նամակին նիւթը, որպէս թէ Բէիզեան Մկրտիչ—պէյը տաճկաց 1277 Ռէճէպ 24 Գարրիկէ սրբազանին գիր մը կըգրէ աղաչելով՝ Գրիգոր աղային մահուանէն առաջ ինչ պատասխան տուեր է իւր գաւազան համար նէ, գրով գրէ պատասխան տայ : Եւ սրբազանն ալ իբր թէ Մկրտիչ—պէյին պատասխան տուած ըլլայ, թէ Գրիգոր աղային մահուանէն 8 օր յառաջ քովը դացի խոստովանցուցիք և բերնէն բան մը չուտնելու համար քանի մը օրէն ետքը վերստին քովը երթալով շատ ստիպելէն ետքը, Գրիգոր աղան յետին չունչը հասած պատասխանեցի, և ես բան մը չունիմ ինչ որ կայ նէ բոլորը եղբորս Մկրտիչինն է, դաւանեալս անոր են իր եղբայրական սիրոյն և խղճմանաւը կըթուղում ըսելով խօսքը կըվերջացնէ : (Ստորագրութիւն :)

Հարցում : Սոյն նամակը գրելիք յետոյ Գառնիկին հետ կըկին տեսութիւն ըրի՞ր, և ինչ նիւթերու վրայ խօսակցութիւն եղաւ մէջերեկ :

Պատասխան : Այո՛ քանի քանի անգամ թէ դուրսը և թէ իր սենեակը երթալով միմիայն բարեկամարար կըխօսէինք և ոչ մէկ նիւթի մը վրայ : (Ստորագր. :)

Հարցում առ Մկրտիչ վարժապետ :— Մարտիրոս վարժապետին տուած պատասխանները և Նշան աղային աղերսագիրը կարդալով՝ հաճեցիք պատասխանել թէ երբ վկայութեան համար ստորագրեցիք յիշեալ նամակը, այսինքն, ո՞ր ամսու մէջ և ինչ թուական գրիք, և ինչ է նամակին նիւթը կամ բովանդակութիւնը :

Պ. Ես Գառնիկին ձեռամբ առնելիք մը ունենալով Միսաքեան խաթունին թիւրքէին կողմէն, երբեմն Գառնիկին քով կըրթայի նոյն դործին համար : Օրին մէկը, այսինքն, իբր 30 կամ 35 ամուր չափ յառաջ քովը դացի նէ՝ գիր մը հանց՝ գործոր արգէն երկու տարի յառաջ տեսած էի, որուն նիւթն էր Բէիզեան Գրիգոր աղային մահուանէն քանի մը օր յառաջ Գարրիկէ սրբազանին ըրած խոստովանութիւնը թէ, ևս ամենեւին բան մը չունիմ և բոլոր ինչքերնիս եղբորս Մկրտիչինն են և զաւակներս ալ անոր կըյանձնեմ, ան զանոնք ինձմէ լաւ կընայի : Այս խօսքը ևս առաջուց Գարրիկէ սրբա-

զանին բերնէն ալ լաւ ըլլալով և յիշեալ գրին վրայ ալ Նորին Սրբազնութեան կնիքը՝ տեսնալով՝ վկայութեան ստորագրութիւնս գրի : յիշեալ գրին թուականն էր 1277 Դապան 1 կամ 2 : (Ստորագրութիւն վարդ. :)

Հ. Ինչպէս կրնայ ըլլար որ երկու տարի յառաջ նոյն գիրը տեսած կըլլար, քանի որ Մարտիրոս վարժապետը գանի 38 օր յառաջ, այսինքն՝ Մայիսի Աին գրած է :

Պ. Մարտիրոս վարժապետին երբ գրած ըլլալը չեմ գիտեր, միայն այս գիտեմ որ իմ ստորագրած գիրս նոյն իսկ անկէ երկու տարի յառաջ տեսած գիրս է : Կարելի է որ Մարտիրոս վարժապետին գրածն ուրիշ գիր մը ըլլայ, քանզի իմ վկայած գրիս մէջ Լէթիկ հանձնին ու խաչիկ Լէթիկին խօսքը կարճ քանի որ ժողովքէն յառաջ ևս Մարտիրոս վարժապետին հետ այս նիւթին վրայ խօսած տեսնեմ ինձ ըսաւ թէ յիշեալ անունները իր չոր գրածին մէջ չկան : (Ստորագրութիւն :)

Հ. Հանգուցեալ Գրիգոր աղային խոստովանութիւնը Գարրիկէ սրբազանին բերնէն լսեցիք, եթէ Գրիգոր աղային բերնէն :

Պ. Գարրիկէ սրբազանին բերնէն լսեցի, իսկ Գրիգոր աղային հիւանդութեանը միջոցին քովը երթալու համար անգամ առթ չունեցայ : (Ստորագրութիւն :)

Հ. Դուք վարժապետ մը ըլլալով ինչ իրաւամբ արքեպիսկոպոսի մը տուած գրին վկայութեան համար կըստորագրէք. և ինչ է պատճառը որ անկէ երկու տարի յառաջ տեսած գրերնուդ միայն 35 օր յառաջ կըստորագրէք, նաեւ ինչ իշխանութեամբ այդպիսի վկայութիւն մը կըստորագրէք՝ քանի որ հոս ո՛չ փոխանորդ էք և ո՛չ ալ ազգային գործոյ մը մէջ :

Պ. Տասնեւմէկ տարի հոս գտնուելով և խոստովանաւոր ճանաչող ըլլալով՝ երբոր Գառնիկը հրաւիրեց որ վկայութեան համար ստորագրութիւնս դնեմ՝ անմտութեամբ ես ալ ստորագրեցի. բայց երբ Գարրիկէ սրբազանին հարցուցի ու յիշեալ գիրը ինք տուած չըլլալը իմացայ՝ խոսեցայ ու դացի այս դէպքը և զիջումս պատմեցի Գարրիկէն Նշան աղային : Երկրորդ խնդրոյն դալով, Գառնիկը թէպէտ նոյն գիրը երկու տարի յառաջ ցոյց տուաւ ինձի՝ այլ ստորագրել չհրաւիրեց. հետեւապէս հրաւիրած տեսնել ստորագրեցի : Այլքին խնդրոյն պատասխանաւ ալ առաջինն է, այսինքն, 11 տարի հոս գտնուելով և խոստովանաւոր ըլլալով ևս ստորագրեցի : (Ստորագրութիւն :)

Հ. Սրբեպիսկոպոսի մը գրին վրայ վկայութեան ըստորագրութիւնս դնելու իրաւունք չունենալիդ մէկ կողմ մնայ, բայց չէ՞ր գիտեր որ մէկու մը գրին վրայ վկայութիւն ստորագրելն յառաջ պարտաւոր էիք նախ կնիքին տիրոջը հարցանել և ապա վկայութեան ստորագրութիւնս դնել :

Պ. Ինչպէս որ ըսի, այդ բանը միամտութեամբ ըրի. բայց վերջը մտաբերելով՝ դացի Գարրիկէ սրբազանին հարցուցի և խորհրդաւորութիւնը իմացայ նէ՝ զղջացի՝ ու դացի Նշան աղային պատմեցի : (Ստորագրութիւն :)

Հ. Զեր ըրած յայտարարութիւնն կրնամք թէ Գարրիկէ սրբազանը նոյն գիրը ստորագրելէք յառաջ ըսեր է թէ Գրիգոր աղան իրեն խոստովանեցի է որ ինչքերնիս եղբորս է ևայլն ևայլն. յետոյ՝ այդ գիրը գրած ըլլալը ուրացիք է : Արդ՝ մենք որո՞ւն հաւատարմք :

Պ. Գառնիկին քով երկու տարի յառաջ տեսած գրւոյս մէջ Գրիգոր աղային ըրած խոստովանութիւնը ըսածիս պէս՝ լաւ էի Գարրիկէ սրբազանէն, բայց գիր գրելը չէի գիտեր. ստորագրելէս յետոյ հարցուցի նէ՝ նոյն գիրը գրած չըլլան իմացայ. ուստի Գարրիկէ սրբազանին ալ կրնայ հարցնել : (Ստորագրութիւն :)

Ժողով որոշեց թէ Գարրիկէ սրբազանին հարցուցի որ ինք Մկրտիչ վարժապետին ըսածին պէս խոստովանութիւն մը առե՞ր է Բէիզեան Գրիգոր աղային, և այդ խոստովանութիւնը գրով տուե՞ր է Մկրտիչ Աէյին և կամ իր կնքովը կնքուած ձեռմակ թուղթ մը տուած է Մկրտիչ—Աէյին կամ Գառնիկ աղային :

Գարրիկէ սրբազանին հարցուած ժամանակը, պատասխանեց թէ իր կնքովը կնքուած ձեռմակ թուղթ մը չէ տուած ո՛չ Գառնիկին և ո՛չ Մկրտիչ—Աէյին, և ո՛չ իսկ վերջիշեալ խոստովանութեան գիրը տուած է Մկրտիչ—Աէյին կամ Գառնիկին. նաեւ Բէիզեան Գրիգոր աղան ալ չէ խոստովանած իրեն թէ ինք բան մը չունի բոլորն ալ եղբորը Մկրտիչինն է ևայլն : Միայն թէ Մկրտիչ—Աէյը չհասանելով իւր եղբորը ինչքը որդեցը տալ, և Գրիգոր աղան ալ կտակագիր մը ըրած չըլլալուն, ու նաեւ կառավարութեան զիւանները աւելի Մկրտիչ—Աէյին ստորագրութիւնը գտնուելով, իրենցամէկ ներուտ շատն ալ նոյնպէս Մկրտիչ—Աէյին անուամբ

ըլլալով՝ քան թէ Գրիգոր աղային անուամբ. ուստի Գրիգոր աղային կնքը իւր եղբորը խաչիկ Լէթիկին հետ միարանութեամբ խորհուրդ ըրին և որոշեցին որ այսպիսի խօսք մը հանեն թէ Գրիգոր աղան իր մահուանէն առաջ ըսած ըլլայ թէ զաւակներս եղբորս կըյանձնեմ, որպէսզի այս խօսքէն զրդուելով իր եղբոր որդիքը աղէկ նայի Մկրտիչ—Աէյը :

Հարցում առ Գարրիկէ սրբազան : Իրա՞ւ է թէ ինք Գրիգոր աղային մահուանէն յետոյ ըսած ըլլայ Մկրտիչ վարժապետին թէ Գրիգոր աղան խոստովանեցաւ որ ես բան մը չունիմ բոլորն ալ եղբորս են և զաւակներս ալ անոր կըյանձնեմ :

Սրբազանն այս հարցման պատասխանեց թէ այդպիսի խօսք մը ըսած չեմ Մկրտիչ վարժապետին :

Ժողովոյս մէջ Գարրիկէ սրբազանին տուած պատասխանները ճիշդ այսպէս ըլլալուն՝ և ինք ստորագրելու կարողութիւն չունենալուն, մեք հաստատութեան համար կըստորագրեմք :

(Ստորագրութիւնք բոլոր ներկայ գտնուող անդամոյ, տէր Կարապետին և ասանաղային :)

Այնուհետեւ ժողովս առաջնորդարանի երկաթեայ անտուկէն երեք կղզանքի տակ գտնուած, որուն բանալիքներուն մէջ տէր Կարապետին, միւսը՝ Նշան աղային և միւսը՝ Մկրտիչ աղային քով պահուած են, Գարրիկէ սրբազանին կնիքը և փոխանորդական տաճկերէն կնիքը երկուքն 'ի միմեկին քանի մը մէջ անփորձ կնքուած գտաւ, որ Մկրտիչ եպիսկոպոսին և Գէորգ—Աէյին կնքովը կնքուած էր՝ անցեալ տարուան ազգային խաթութիւններէն յետոյ :

Գառնիկը ինչպէս որ խոստացիք էր հարսանիքէն վերջը ժողովս գալու, ըստ այնմ ժամը 10 1/2ին, որ հարսանեաց արարողութիւնը աւարտած էր, Եսգուպը խրկուեցաւ որ հրամայէ, պատասխան տուեր էր թէ հիմա կուգայ, ժողովս կէս ժամալ՝ սպասելէն յետոյ՝ չորրորդ անգամ երբ սպասաւորը իրենց հարսանեաց տունը, անկից պատասխանեց եւ թէ Գառնիկ աղան տկար ըլլալով՝ ելաւ գնաց : Ուստի ժողովս հետեւող որոշումն ըրաւ :

Աղերսագրոյն բովանդակութեանը՝ նայելով՝ և ապա ցոյցներ տեսնելով, և Գառնիկը հարսանիքէն դարձին առաջնորդարանիս տաճկէն անցնելով, ժողովոյս չհանգիւղելուն համար կըհետեւի թէ իր վրայ եղած կնքը նամակ գրելու ամբաստանութիւնը անհիմն չէ՝ և ինքը ծանր կասկածաբար կնքակալ կըգտնուի. վստահօրոյ՝ ուրոշուցաւ. ոտակալութեան գրել որ Գառնիկը ծանր ամբաստանութեան տակ ըլլալով՝ ուղղուած ատենը գրեց՝ ձեռք ձգելու համար պէտք եղած միջոցներն 'ի դործ գնէ, այսինքն, ապահով երաշխաւորութիւն մը առնու, և հրաման ընէ որ վաղը երկուշաբթի ժամն Տին յառաջնորդարան ժողովոյս ներկայանայ :

(Ստորագրութիւնք ներկայ գտնուող անդամոյ և տէր Կարապետին :)

13 Յունիս 1866. յառաջնորդ. Հայոց 'ի Գահիրէ :
Ժողովս այսօր արտաքոյ կարգի նիստ մը ըրաւ, որպէսզի Գառնիկը ներկայանայ և երեկուան խնդրոյն վրայ իրեն ալ պէտք եղած հարցումներն ըլլուի. սոսկայն Գառնիկը հիւանդ ըլլալ պատճառով՝ այսօր ևս չհասնեցաւ ժողովոյս ներկայանալ. ստոր վրայ ժողովս որոշեց որ յառաջիկայ հինգշաբթի օրը ժամը Տին նոյն դռնմարտի, և յառաջմանէ գրուի Գառնիկին որ նոյն օրը 'ի ժողով հրամայէ, ապա թէ ո՛չ՝ ժողովս պիտի պարտաւորի արժան եղածն 'ի գործ դնել :

(Ստոր. բոլոր ներկայ գտնուող անդամոյ :)

Քաղաւած ժողովոյս 1866 Յունիս 16ին նիստին արձանագրութենէն :

Ժողովս տեղիկանալով թէ Գառնիկը անհրաժեշտ է զած է, որոնք ժողովոյս հրաւիրուած էր այսօր իր վրայ եղած ամբաստանութեան պատասխանելու, որոշեց Գառնիկին անհրաժեշտաւ ծանուցանել ոտակալութեան, որ հարկ եղած միջոցներն 'ի գործ դնէ որ Գառնիկը, եթէ տակաւին եգիպտական հոգին վրայ կըգըտնուի, չկարենայ փախչիլ : Եւ եթէ ուրիշ տեղ մը գացած է՝ հեռագրով հրաման խրկէ և բռնել բերիլ տայ :

24 Յունիս 1866,

Ստորագրող անդամոյ Հայոց 'ի Գահիրէ :

Հալէպի մեր մեծարդոյ բարեկամ Բիւրքահանօֆ Զօհաննէս աղան յիշեալ քաղաքին նախկին առաջնորդ հոջակաւոր Նիկողայոս եպիսկոպոսին՝ Սոսի Զարութիւն եպիսկոպոսի մը ձեռք Կիլիկիոյ ամբո-

ողն կաթողիկոս օծուիլը, որ տեղի ունեցեր է 'ի 11 Յունիսի, մանրամասնաբար կը դրէ . և իւր բնական ազդասիրութենէ շարժեալ ցաւալի խորհրդածութիւններ կընէ. այս ապօրինաւոր եղելութեանը վրայօք՝ որ ազգիս նախատինք և անպատուութիւն է:

Վերջապէս 'Եկեղեցւոյ եպիսկոպոսը, այսինքն Կիրակոս Դ. անուամբ, Սիւնի Կիլիկիոյ կաթողիկոսը Յունիսի 25ին խուռն բաղմութեամբ Հալէպ մտեր և ուղղակի սուրբ եկեղեցին երթալով, նախ մինչև այն օրը դորձած իւր ամեն յանցանաց համար ընդհանուր թողութիւն խնդրեր և ստացեր է և յետոյ երկար քարոզով մի իւր կաթողիկոս օծուիլը ի մացուցեր է:

Ճաղովուրդը և կըրեր սիրով և ամենայն հնազանդութեամբ ընդունելու են զոր կաթողիկոսը: Հալէպի եկեղեցւոյ մէջ սուրբ պատարագի ժամանակը նոր կաթողիկոսին անունը յիշեր են. և շատ հաւանական է որ Կիլիկիոյ նահանգին ուրիշ քաղաքացի մէջ ևս միևնոյն բանը կըլլայ:

'Եկեղեցւոյ եպիսկոպոսը՝ իրեն կաթողիկոս Սիւնի Կիլիկիոյ, Հալէպի կուսակալին ներկայացրէ և ընկերութեամբ քանի մը եկեղեցականաց ու ազգային երեսներէ: 'Երբին վսեմութիւնը արժանաւոր պատուով ընդունելու է կաթողիկոսը:

Հաւաստի Կիրակոս կաթողիկոսին Հալէպ իւր մէկ բարեկամին յուզարկած կոնգրակին օրինակը:

Կարուպիկոսարան

Հայոց 'ի Սիսի 13: Անտիոք, 10 Յունիս 1866:

Կիրակոս ժառայ Բիստատի եւ կարողութեամբ Աստուծոյ կարողիկոս Հայաստանաց եւ եպիսկոպոսապետ տանն Կիլիկիոյ մեծի, սպասաւոր սուրբ Լուսաւորչի Աջոյն եւ վստիպաւ մայր Ս. Արքայոյն, յորմէ Աստուածային սիրով եւ օրհնութեամբ, ծանկի ա պերճապատիւ ազնուածնունդ Պ. աղա մտեր իմ սիրելութեանց լսելով 'ի Բիստատ միշտ:

Եւ ընդ փրկչաւստ ողջունի եւ օրհնութեան նախախա, յայտ լիցի հարազատութեանց, հարազատ բարեկամութեան նշանն այն է, որ իւր բարիքն եւ Աստուածավայել պատիւն եւ յարգանք իւր բարեկամին երախայրիք (քորթանտա) նուիրել, որպէսզի բարեկամութիւնը անկեղծ ըլլայ, յայտնի երեւեցի: Այոյն սա անգրանկ օրհնութեան նամակաւ յայտ առնեմ համառօտիս, քե ողորմութեամբն Տեառն եւ Ազգիս(1) ընդհանրութեան ստիպմամբ, Վիստի նըշխարաց սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին՝ Կարողիկոսութեան օծման հանդիսէ կատարեցաւ եւ փոխեցաւ անուն մեր Կիրակոս Դ. կարողիկոս Հայոց մեծին Կիլիկիոյ տանն Բարեկեանց, եւ այս Կիրակոս անունը 'ի վաղուց մեր վրայ պիտոր կրեանք, յայց աշխարհի գանազան զհայրերը արգելք եղան եւ այժմեան բողոքցին: Իսկ այժմ զնորին Ս. Հոգւոյն օծար սուրբ մեռնու. Հայրապետ մեծին Կիլիկիոյ, ապառիկելով օրհնելով ազգիս հարազատութեան վերայ: Չի բնական ճիւղ արժանի եւ ոչ փափաքող այս աստիճան քանանայապետութեան, բայց բանի մը ալիքայութիւնք եւ մանաւանդ տեղապահ Սկրտից եպիսկոպոսի անկարգ ամբարտաւանութիւնքն ստիպեցին շրջակայ ազգերին, որ կամայ ակամայ հանեն բարձրացնեն զիս յարոս կարողիկոսութեան:

Աստուծով 'ի մօտոյ զիրար կըտեսնեմք եւ բոլոր եղիւրքիւնն կիմացնեմք ձեր սիրելութեան, եւ արգոյ Յովնանէս Լեւոնի Բիստատման յատուկ օրհնութեամբ ասան քե եկելով անցեալն հանց. . . զինքն ինն առաջին բարեկամ գիտեմ, բարեկամութիւնն աղայութիւնն այսպիսի ժամանակի յայտնի կուրիցի, տեսից ձեր քաջութիւնը, անա բանի մի անուր յետոյ գամք այլը 'ի տեսութիւն բարձրապատիւ Ճիւղ տես փառային. այս համառօտիս այժմ բաւականացեալ, ողջ լերուք:

(Ստորագրեալ) Կիրակոս կարողիկոս Հայոց Կիլիկիոյ մեծի:

Եւս ամեն եղելութիւնները տակաւին 'ի դորձ րուած չէին, երբոր յիշեալ ապօրինաւոր կաթողիկոսութեան լուրը Կ. Պօլս ազգային վարչութեան հասաւ: Պատրիարքարանը փութացաւ 'ի Դրան զանգատելու ընդդէմ այս ապօրինաւոր եղել:

(1) Տարակոյ չկայ, թէ Կիլիկիոյ Հայոց ընդհանրութիւնը կրնայ:

լուծեան, խնդրելով որ հեռագրական միջոցաւ հրաման յուղարկէ Հալէպի կուսակալին, որպէսզի Կիրակոս կաթողիկոսը և Սիւնի Կիլիկիոյն եպիսկոպոսը բոնել տալով անիշապէս Արտանդնուպօլիս յուղարկէ:

Լզգային վարչութիւնը ահա իւր պարտքը կատարեց. այսու ամենայնիւ տակաւին յիշեալ եկեղեցականները կամ Հալէպ կամ Հալէպի նահանգին մէջ կը գտնուին: Ի նչէ այս յապաղման պատճառը չեմք գիտեր: Բայց կարծեմք թէ լրագրիւնները և ուրիշ շատերը կը տեսնեն երբոր վարչութեան վերայ կը դնեն ազգային որոշմանց շատերուն անդործադրութիւնը կամ գործադրութեան յապաղումը:

Արտանդնուպօլսոյ Դաւանակ հանգէսը հետեւալ խորհրդածութիւնները կընէ վարչութեան վրայօք.

'Մի բարձրակալ իշխանութիւն մը վարչութեան մը համար անբաւական է. մեր ազգային վարչութիւնը իրաւ է որ բարոյական իշխանութիւն մըն է. բայց միանգամայն Բարձրագոյն Դրան միջոցաւ 'ի դորձ զնեղու սեփական իշխանութիւն մ'ալ ունի, հարկ եղած առեւ թափելով մը կընայ յանցաւոր մը պատժել տալ. կամ պաշտօնէ դադարեցնել. կամ Պօլս բերել տալ. բայց ինչու համար երբեք և շատ անգամ իւր թափելներն անգործ կը մնան, այս մասին որոշ անգիտութիւն մը չունինք: 'Եկեղեցւոյ եպիսկոպոսին համար՝ ասկէ առաջ հեռագիր զայցած էր 'ի Դրան կողմն որ այս կողմ խրոխ յիշեալ եպիսկոպոսը, մինչև ցարդ հեռագրով եղած հրամանին արդիւնքը չտեսնելէն վերջը: 'Եկեղեցւոյ եպիսկոպոսը կաթողիկոս օծուած ըլլալուն լուրն առինք:

Մեզի տարօրինակ բան մը չեմք տեսնել 'իսկ 'Եկեղեցւոյ եպիսկոպոսը խիստ անխելք մարդ չէ: Պօլսոյ Պատրիարքարանի ընթացքին ու վիճակին շատ քաջ հիմունքներ ունի. ինքն ալ ճարպիկ ըլլալով՝ նկատեմք որ Վրթամարայ մարդասպան ամբաստանեալ կաթողիկոսը զեւ իր տեղն է. նկատեմք որ վարչութիւնը զինքը Պօլս բերել տալ կուզէր ու չյաջողեցաւ. եթէ սպասէ վարչութեան ընդլինքին. եթէ սպասէ կաթողիկոսական յանձնաժողովոյն պատրաստած անգիտարկն մէջ Սոյ և Վրթամարայ կաթողիկոսութեանց համար սահմանուած ծրագրին գործադրութեանը. եթէ ինքզինքը Պօլսեցոյց ձեռքըն յանձնէ. բնաւ կաթողիկոս ըլլալուն յոյս չպիտի ունենայ. ուստի ինքզինքը կաթողիկոս չիներէ, և անկէ վերջը ըլլալինքն ալ իրեն կաթողիկոս կը մտածեմ ըսելու որ վերջացուցեր է:

'Եկեղեցւոյ եպիսկոպոսին էն մեծ ապահովութիւնը Պատրիարքարանի վարչութեան անկարողութիւնը և Պօլսեցոյց զիրա հաւանութիւնը եղած է: Վիւրա հաւանութիւնը տկարամտութիւն կենթադրէ, և 'Եկեղեցւոյ եպիսկոպոսը Պօլսեցոյց տկարամտութիւնը շատ փորձերու մէջ տեսած է անշուշտ. որպիսի եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանայներ, իշխաններ Պօլս կանչուած են. առջի օրը քիչ մը սաստ և յանդիմանութիւն լսած. երկրորդ օրը կակղութիւն. երրորդ օրը բոլորովին ներողութիւն. չորրորդ օրը միջնորդութիւն, հինգերորդ օրը ապահովութիւններ, վեցերորդ օրը փառք ու սպառնալ, եօթներորդ օրը իր անցադիրները, ութներորդ օրը ճամբորդութիւն: Եւս այն անձերը որոնք մեծ զայն րացմամբ, անհասարկ բարկութեամբ կրակ կտործ մեղքէն՝ ստիպով Պօլս կանչել կուտան դրսէն մէկը իշխան տառնորդ վանհայր և այլն. բոլորովին փոխուած կը տեսնուին Տ աւուր մէջ, և եթէ մեղքէն ստիպել ինչորեւէ համար թափելը գրեւոր եղած որոշման աւուր զայրոյթը և ցատուր տեսնող ըլլայ ուրիշ բան մը չեսեր բայց եթէ վայն այն գալիք մարդուն, որ զալուն պէս երթալիք տեղը կամ փրկիչ պիտի ըլլայ կամ ի վերջոյ:

Տատեան հանդուղեալ Պօլս-Պէյի գուստը ազնուափայլ Մազթաղինէ իշխանուհոյն Պէհլուլով 'Եկեղեցւոյ իշխանին հետ ամուսնութեան հանգէսը անցեալ կիրակի Յունիս 19ին կատարուեցաւ Ս. Ս. թէփանօ մեծ փառաւորութեամբ և վայելուչ շքերդութեամբ: Ըմանապատիւ սրբազան Պատրիարք հայրը, զերապատիւ Երեսն եպիսկոպոս, և պատրիարքական փոխանորդ գեր. Վարդապետ վարդապետ, և ուրիշ 6-7 վարդապետներ, նոյնչափ ալ քահանայներ ու դպիւններ ներկայ էին այս հարսանիաց:

Սուսիոյ վեհափառ Աղէքսանդր կայսեր եղբայր և Կովկասու փոխարքայ Սիւրբէյ մեծ դուքսը Պէհլուլով իշխանին կնքահայր եղած ըլլալով, մեծ գութքը յանձնարարութիւն ըրած էր Պօլսոյ դեսպան վսեմ. Իկնաթիէի զօրապետին որ փոխանորդաբար կնքահայրութեան պաշտօնը կատարէ օ ուստի նոյն կիրակին Սուսիոյ վսեմ. դեսպանը իր լծակցով և իր դեսպանատան պաշտօնատարներով մէկ տեղ յատուկ շնորհակալ Պէյի քաղաքէն եկաւ Ս. Ս. թէփանօ ժամը 3ին միջոցները, ուր մեծ պատուով ընդունելութիւն եղաւ:

Երեկոյեան ընթերցէն յառաջ նշանի և հաւաքի օրհնութիւնները կատարուեցան վայելուչ փառաւորութեամբ. ընթերցէն ետքը նուագարանաց և պարի շարունակութիւնը տեսց մինչև ժամը 5 1/2. որ ատեն սուրբ եկեղեցւոյ զանգակը հնչելով պատարագ մատուցանելու սկսաւ 'Երեսն սրբազանը:

Սկսան բոլոր հանդիսականք կարգով 'ի սուրբ Եկեղեցի իջնել. դեսպանը և դեսպանատան պաշտօնատարները իրենց համազգեստները հաղած. հրաւիրեալ այր և կին իրենց վայելուչ հագուստներով զարդարուած զոյգ զոյգ իջան յեկեղեցի. ուր հարսանիաց տան և դիւղին բաղմութիւնը լցուած էր:

Խիստ փառաւորութեամբ բոլոր եկեղեցական խորհուրդները կատարուեցան երամիշտ թաշտեան 'Եկեղեցւոյ աղայի հոգատարութեամբ. պսակի աղօթքն աւանդապատիւ Ս. Պատրիարքայրը կատարեց իր եկեղեցական անանկուռ զգեստները հաղած. Ս. Պատարագէն վերջը գեր. 'Երեսն սրբազան գեղեցիկ քարոզով մը հանգէսը վերջացուց, բարեմաղթելով նոր ամուսնացեալը և կնքահօր և ամենայն պարագայի բարօրութիւն ու երջանկութիւն, և հատեան և Պէհլուլով գերզանաւոր մշտապէս պայծառութիւն 'ի փառս Ազգիս:

Յարգոյ խմբագիր Արշալուսոյ, Իզմիր, 20 Յունիս 1866:

Երեք ամիսէ 'ի վեր իզմիր գտնուելով, տեսայ որ Աստուծոյ անուն ընկերութիւն մի կ'աւանդուէր. և քաղաքից երկու սեւի վարժարանաց տեսչութեան և յուսալիմութեան ծանր պաշտօնը վրան առնելով, անձնունէր ջանիք կաշխատի. և որովհետեւ հարցաքննութեան օրերը մօտեցած էին, ուստի փափաքեցայ յիշեալ ընկերութեան արդիւնքը տեսնելու. հասար. քանի մը օր տակաւին մնալ ի վեր:

Յուլիսի 5ին հարցաքննութեան հանգէսը սկսաւ և շարունակեց. և ես ամեն օր ներկայ գտնուելով՝ աշակերտաց պատասխաններէն շատ գոհ եղայ: Իզմիրի ուսումնականներու վկայութեամբ այս եռամեայ արդիւնքը՝ անցեալ տարիներուն միամայ արդիւնքին կը համապատասխանէ եղեր: Ինչու որ այնինչ յառաջագոյն՝ մեծ և փոքրիկ աշակերտները՝ իրենց ուսմանը թոթակարար կըստլին, այժմ իրենց դասերուն հօգին և խմատը աղէկ հասկնալով և միտքերուն մէջ տպաւորուելով կըստլին: Վերջապէս սուրբ Մեսրոպեան վարժարանին աշակերտները հետեւեալ ուսմանց վրայօք հարցաքննուեցան. այսինքն՝ Հոյրէն քերականութիւն, Հայոց պատմութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, աշխարհագրութիւն, թուարանութիւն, երկրաչափութիւն, զիցարանութիւն: Տաճիկէն, զաղղիկէն, անդիլիկէն և յունարէն: Աշակերտները՝ ըստ մեծի մասին զոչալոցից կերպիւ պատասխանեցին. և ես ուրախ ըլլալով ազգային մանկանց յառաջդիմութեանը և յաջողապատիւնի վերայ՝ իմ խնդակցութիւնս և խորին շնորհակալութիւնս յայտնեցի Աստուծակը ընկերութեան մեծարգոյ անդամոցը և անոր գիտնական Ստեփանոսին:

Կազախմ, յորդոյ խմբագիր, այս նամակս շնորհք ընէք ձեր լրագրոյն առաջին թուոյն մէջ հրատարակէք: Զեր բաժանորդներէն մէկը:

Թիֆլիզի վաճառական անուն լրագրոյն թիւ 7 թերթին մէջ հետեւեալ ցաւալի լուրը կը կարգամք:

Յաւելով յայտնումներ մեր կարգացողներին, որ Ս. Ս. թիւ 13ին Ստրատով գաւառում վախճանվիլ է հաւմարտ թէ բոլոր Հայերին յայտնի մեր ժամանակակից մատենագիր ՄԻԲԱՅԷԼ ՆԱԼԱՐԱՆԴԱՆՅԱՆ, Սրա մարմինը բերվել է Երեսնից: Թաղելու: Ստում ենք ցատուի է մեզ հասկն սխալ համարաւ տալը, որովհետեւ շատ քիչ են մեզանում առհասարակ նրա պէս երկտաւարներ, որոնք իրանց զրջով շուր ու մտն լինին:

տված հայութենին վերաբերած հարկադր խնդիրները
«Հիւսիս-արեւել» անունով ժուրնը կարող ենք հաստատ
ասել, որ եթէ ունենար արժանաւորութիւն—դա էր միայն
էս հանդուցիակ աշխատութիւններով, որոնք որ տրւո
վում էին առհասարակ կոմս Լեւոնուհի անունով:

ՎԻԿՏՈՐԻԱ

Անգղիոյ թագուհոյն՝ Սրբազան
Հայ թագաւորութիւններէ սերկը:

Յարգոյ պարոն Ս. Միքայէլ վանադեցի ուսում
նական երիտասարդին հեղինակութեամբ հայերէն եւ
դիւանը անգղիարէն լեզուաւ շարադրեալ պատուա
կան եւ հետաքրքրական փառքի գիրք մընէ: Երոս
վերայ ուսումնական հասարակութեան ուշադրու
թիւնը կը դրար իրեն:

Տպեալ ի Զմիռնիա, ի գործարանի Տեղեան:
1866

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԵՅ ՅԱՆԿԻՍ

Կայսերական հրովարտակա հետեւեալ փոփոխու
թիւնները եւ պաշտօնաբաշխութիւնները եղան:

Ըրդարութեան բարձրագոյն Ըտենին անդամ լինե
լիս է ֆէնտին Լափափի վերապետը անուանեցաւ
փոխանակ Մէքիմ էֆէնտին որ մտերս կաթնուածի
սաստիկ հարուածով վախճանեցաւ:

Պրուսայի ընդհանուր կառավարիչ Համտի փա
շան՝ Կասթամունի ընդհանուր կառավարիչ կար
գեցաւ, փոխանակ Խամայիլ Քասիմ փաշային, որուն
Պրուսայի ընդ. կառավարչութիւնը յանձնուեցաւ:
Վ սեմափայլ անարք Կապուլի փաշան եւ Մէքիմ
մէտ Քէմիլ փաշան՝ Ըրդարութեան բարձրագոյն
Ըտենին անդամ անուանեցան:

Սեմապատիւ Սաքրըլեան (Յոհաննէս էֆէնտին,
որ Բարձրագոյն Վերան տպագրական դիւանին տնո
րէն է, երկրորդ կարգի պաշտօնատարութեան աս
տիճան ընկալաւ. եւ արտաքին գործոց թարգմանա
տան դիւանին անդամը մեծարգոյ տեարք Չայեան
Իլիս էֆէնտին. խորասանձեան Յոհաննէս էֆէն
տին, եւ լաշըր ու Ըրնայտըր էֆէնտինները երրորդ
կարգի պաշտօնատարութեան աստիճան ընկալան:

Ըստայ Դին՝ Կէսթին երկու ժամ մնացած մայ
րաքաղաքի արուարձաններէն Սաքրի գեղին մէջ
եղած արքունի վառօրի շտեմարաններէն մէկ փոք
րիկը, որ եւ է դէպքով մի կրակ առնելով, հազար
այայթիւնով մի օդը ցատկեցան. շտեմարանը եւ անոր
մետ վրաններու ներքե ֆիշէք քիւնելու աշխատող
գործաւորները. որոց թիւը 600 հոգիէ կը հասներ
կըսեն: Ըստ պայթիւնը այնքան սաստիկ էր, որ
մէջ միայն Սաքրի գեղի տունները ըստ մեծի մասին
քիւսեց, այլեւ Կ. Պօլսի շատ տուններու ապակիները
կոտորեցան եւ երկրաշարժի նման ցնցումով զգացին:

Ըստ ցաւալի լուրը առնելուն պէս՝ պատերազմի
պաշտօնեան փութացաւ Սաքրի գեղ երթալու եւ
հարկաւոր եղած տնօրէնութիւնները անմիջապէս ի
գործ դնել տուաւ: Թեպէտ մեծօրէններու եւ վի
րաւորներուն թիւը ճշգիւ ցայտնի չէ, սակայն 200
հոգիէն պակաս պիտի չըլլայ:

Երեքշաբթի օրը եկեղեցական վիճակային ժողով
Դուսիս-արեւել Սաքր եկեղեցին գումարուելով՝ Ս.
Լափափի կաթնուածի ընտրելու ցուցակը
պատրաստեց գաղտնի քուէարկութեամբ: Ըրաւելա
ցոյն քուէ ստացողներն եղան հետեւեալ 7 բարձր
աստիճան եղեկեցականք:

- | | |
|-------------------------------------|----|
| Տէր Գեորգ Ըրքեպիսկոպոս Պրուսայու | 31 |
| Տէր Պօղոս Ս. Պատրիարք Կ. Պօլսոյ | 30 |
| Տէր Իսկանդար Ըրքեպիսկոպոս Վ. Կոնստ | 26 |
| Տէր Թաթեոս Ըրքեպիսկոպոս Թեքիրտաղ | 20 |
| Տէր Ըրիստակէս Ըրքեպիսկոպոս Իսկիւտար | 19 |
| Տէր Իսայի Ս. Պատրիարք Իշուսաղէթի | 18 |
| Տէր Սակար Ըրքեպիսկոպոս Տիփսոս | 16 |

Վ իճակային ժողովն այս առաջին գործը կատա
րելէ ետեւ, Սոյ Եւ Ըրթամարայ աթոռոց փոքրիկ
ձեռք առնելով, Սոյ Ներկողոս եպիսկոպոսին եւ Ըր
թամարայ խաչատուր եպիսկոպոսին կաթնուածի
նալն եկեղեցւոյ օրինաց եւ կանոնաց հակառակ եւ
հետեւաբար անվաւեր վճռեց, եւ այս երկու աթոռոց
համար մէկ մէկ օրինաւոր կահակալ ընտրուելու
համար գաղտնի քուէարկութեամբ երեքական ընտ
րելի որոշեց. որք են:

Սոյ աթոռին համար

Տէր Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան,
Տէր Ըրիստակէս եպիսկոպոս Ըրթամարայ,
Տէր Յոհաննէս եպիսկոպոս Իշուսեան:

Ըրթամարայ աթոռին համար

Տէր Զակար եպիսկոպոս Թեփուզեան,
Տէր Սկրաիշ վարդապետ Խըրըմեան,
Տէր Իշուսեան Սոյ Եւ Բաղէշու:

Վ իճակային ժողովն Սոյ Եւ Ըրթամարայ աթո
ռոց համար ընտրելու ցուցակ պատրաստելու ձեռ
նարկութիւնը քիչապէս կրտեսուեալ՝ համաձայն չէ
կաթնուածի ընտրելու յանձնարարով տեղեկագրին տը
րամադրութեամբ, որ է երկուքին ալ միաբանու
թեանց կողմէն ներկայացուած օրինաւոր ընտրելու
ցուցակի մը մէջէն ընտրել իւրաքանչիւրին կաթն
ուածը: Բայց վիճակային ժողովը նկատելով որ
յիշեալ երկու աթոռոց միաբանութիւններն այս մի
ջոցիս բացառիկ վիճակի մը մէջ գտնուելով կարող
չպիտի ըլլան օրինաւոր ընտրելու ցուցակներ
պատրաստելու, որոշեց եւ ինքնին պատրաստել այս
անգամ յիշեալ երկու աթոռոց ընտրելիներուն ցու
ցակները. այս ալ ըստ միջ իրաւացի կը թուի:

Սալա:

ՔԱՆԱԾԱՆ ԵՄԻՐ

Զմիռնիա, 23 Յունիս:

Նահանգի ընդհանուր կառավարիչ վսեմափայլ
Սիրէյա փաշան շորքաբերթի օրը ծանուցան շորքաւոր
հասաւ իզմիր Կ. Պօլսին գաղտնի: Բաղարական եւ զին
ուորական պաշտօնատարները, նմանապէս զանազան
հասարակութեանց երեսփոխանները խորհուրդ յարգանք
շորհաւորեցին Նորին Վսեմութեան գաղտնի: Բա
ղարիս ամրոցներէն ալ ըստ սովորութեան թնդանօթ
ներ արձակելով, մեր վսեմափայլ նոր կառավարչին զա
րտաւոր ծանուցին հասարակութեան:

Վսեմափայլ ընդհանուր կառավարիչ վսեմա. Ռաշիտ
փաշան այսօր կրակի իւր նոր պաշտօնին կրթութեամբ
Յայտնի է որ իզմիր Երուսաղէմ երկրները, նմանա
պէս զանազան հասարակութիւնները մշակել ուղիւ
մատուցին իրենց շորհակալութիւնը յայտնելու: Նորին
Վսեմութեան վսեմ մարդասիրական ծառայութեանց
զորս մատուց քաղաքի զօրաւոր պարագաներու մէջ:

Վերապատիւ Տիգրանեան Մկրտիչ վարդապետը,
որ մօտերս Կ. Պօլսոյ աղային Վարժութեան տնօրէ
նութեամբ Հալէպի առաջնորդ անուանեցաւ, անցեալ
շաբթու իզմիրէն անցնելով իւր պաշտօնը վարելու գնաց:

Ըստ ամենայն երևմանց՝ քիչ ժամանակուան մէջ
հաշտութիւնը պիտի ընկնայ: Երուսաղէմ համաժ լու
րերը ամենքն ալ կը հաստատեն թէ պատերազմը տէ
րութեանց մէջ համաձայնութիւն մի տեղի ունեցիւ
միջամտութեամբ Քաղկեդոնայէն: Յայտնի է որ հինգ
օրուան զինադադարը ընկնալուն, միայն հաճու
թեամբ չորս շաբթուան նոր զինադադար մի եւ որոշ
ուեցաւ. ուստի կը յոշտայնուի թէ այս միջոցին խաղա
ղութեան դաշնագրութիւնը կատարելապէս կ'ընկնայ:

Հաշտութեան համար առաջարկուած նախապայման
պայմանները արդէն ընդունուած են, կըսուի, պատե
րազմը տեղութիւններէն: Սոյ պայմաններն են. նախ՝
Վալեմի դերմանական դաշնակցութեան ջնջուլը. նոր
դաշնակցութիւն մի պիտի չըլլայ հիւսիսային վիճակաց
միջոցաւ Բուսիոյ նախապահութեամբ եւ առանց Աւստ
րիոյ մասնակցութեան, որ պիտի զինուոր միաւորուի հա
րուսային գերմանական վիճակաց հետ, ուրիշ նման
դաշնակցութիւն մի կ'ունենալու համար: Սակայն երկ
րին ամրոցներէն պիտի պահուի բայ ի Վ. երեսփոխ
սակայն Բուսիան ի փոխարէն իւր պատերազմի ծա
խոց՝ Լալի գործութիւնները պիտի աւելնայ բայ ի այն
երկրներէն որ Տանիմարքի կը վերադարձան:

Պատերազմի ծախուց վճարման համար ուրիշ քան
մը եւ կըսուի. այսինքն որովհետեւ Վ. երեսփոխ առանց
պատերազմի թող տուրն համար՝ 250 միլիոն ֆրանկի
փոխարինութիւն մի տալ Աւստրիոյ՝ կը զոհուի, նոյն
գումարը այժմ Բուսիոյ մօտիկ կառավարի:

Վ երկուքն կը հաստատեն թէ այս ամեն ծախ իւր
դիւրեւ թնեւելու եւ որոշելու համար արքայաթոռով
(քօնկիւր) մի պիտի գումարուի ի Փարիզ. եւ կենցաղա
գէտ անձանց բաւական ժամանակ տալու համար ի
քննութիւն այս ծանրակշիւ խնդրոց, այժմեան հաս
տատուած զինադադարը, որ չորս շաբթէն, մինչեւ
Նոյեմբերի վերջը պիտի երկարի:

ԸՌԵՆԻՏՐԵԿԸՆ

Սոստաւոր հաշտութեան ակնկալութիւնը առեւ
տուրին քիչ մը յաջող շարժում մի տալու վերայ է:
Բաւական կուզուի. անցեալ եւ այս շաբթ 550
հակի չափ վաճառեցաւ 64 էն մինչեւ 750 ղուրուշ:
Հին հունիս աֆիօնէն 20 կողով վաճա. 140ի:
Վեօքայոյսին գինը 240-250 ղուրուշ է եւ այս
գիներով 300 հակ վաճառեցաւ:

Փալամուր դերաւաճաւ է, 2250 կենդինար
Ընդերին տեսակ փալամուր ծախուեցաւ 92-106ի:

ՀԻՒԱՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՍԸ



ԴԵՂԱՆԱՏԻ ՀԱՆՈՒԹԵՒ
ՉԼԱՍԵՆ ՀԻՒԱՆԴԻՆԻՆԵՐԸ

Մարդիս ըզջին գրութեան (նշեմ) շատ յոգնած ըլլալը
սովալի ախտ մըն է եւ զինքնուան ամենափոքրիկ շարժումը կամ զբո
ղութիւնը վշտալի է յոյժ. վսեմ գի ուր գտնուելու է անոր գե
ղը: Միակ գեղը այս է. քիչ խմ գինի, քարեղութ, եւ ոգե
ւեց ըմպելը. եւ անի աղէկ կըլլայ որ բուրբոյն հեռանա ա
նոցմէ, եւ ամենին իմաստ անմանապէս իմացիլ մի խմել, եւ անոր
անդ լինել թէյով (չայ) գինի եղիլ: Վարժի եղանակը զմե
քուր օգտէ, ամեն գիշեր իմ գեղահասակները կամ շորս հաս
կըլլէ: շատ մի կեր եւ համեմունք (սոյս) հեռի կեցիլ: Եթէ
այս օգտակար կանոնները ճշգրտեամբ ի գործ դնելու ըլլաւ,
միայն շատով պիտի հանդիմանայ, մարմնի առողջ պիտի ըլլայ
պիտի մոռնալ թէ զգա շարժումն ունեցաւ:

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԵՐ ԵՐԵՎԱՆԻՍ
Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մէջ
թէ կըլլանք իմեն անի ընկնել կըլլան կամ բաւական չեն ըլ
լաւ: Թէ քար կամ անոց երկրանց կը հասնին կամ թէ ա
նոց մէջ ցաւեր կը դրանան մէջքին համապատասխան մասը, Այս
ամեն հիւանդութեանց ժամանակ անոց եւ Լուսնի դեղահասակ
ըն առնու տպեալ հրահանգաց համեմատ եւ անոր սպիղանիքը չը
փել երկրանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը: Այս
դարձանք անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնքան ու
րիշ գեղերը զուր տեղը գործածուած պիտի ըլլան:

ԱՍՏԱՐԱՓԱՒ ԱՐԴՈՒՆԵՐ
Որ եւ է գեղ մի չկրնար մտանքի գործիքները նորոգել եւ
անի կըլլան զայն շատով ինչպէս այս գեղահասակները. որոնք անբա
խաւուսեան կամ վատթար կերակուրէ պատճառաւ բոլոր թըթ
ուութիւնը կը վսեմ եւ կը հասնին ի խարի (էթա ճէյեր), ո
րուն գործողութիւնը կը կարգադրեն. քիչերու անսովի ձգտման
(սօթմ) դէպքերու մէջ սքանչելի ներգործութիւն մի ունի եւ լեքի
նա ստանալու ամեն անկախութիւնները միտ կը բռնէ:

ԲԱՐԴՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԵԱՆԱՆԻՍ (ԴՈՒՆԻՐ) ՀԱՅ ԵՒ
ՀԱՐԱՐՈՒԼՍ

Շնչանութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւնը
ամեն ախտն անի յաճախ կը պատահի եւ երբեք անի վսեմ
գումար է: Անոց գործողութեանց անկարգ ընթացքին առաջին ջը
շանները կրնան միտ կարգադրուիլ. Լուսնի հաշակաւոր գեղա
հատից միջոցաւ: Անոց շատով կը դարձան արեան որ եւ ան
թամանակայ անշարժութիւնը, կը թէ թէ ցին խցուած շնչաւոր
ըն, կը բարեխաւան: Շնչանութեան սաստիկ արագութիւնը եւ կա
րողութիւն կուտան շնչափողին ու թոքերուն դերութեամբ եւ կա
նոնաւորապէս գործելու: Այս դեղահասակները իրենց մարդկային
զօրութեամբ կը արքին արեւն անոց արեւութիւններէ, եւ այս
եղանակաւ կը զօրացնեն զգրութիւնը (նշեմ) ընդդէմ ծեւա
կան ախտի, շնչաւորութեան, եւ ուրիշ թոքային տկարութեանց:

ՏԿԱՐԵՑԵԱԼ ՄԱՐԿԱՆԻՆ ԲԱՆԿԱՑՈՒԹԻՒՆԵՐ

Տարութեան, թուութեան եւ զգացականութեան գեղեքեւ
մէջ, որոնք որ եւ բնական կամ գերբնական չափազանցութեան յա
ւաք եղած են, այս դեղահատից պիտի լինէ եւ նորոգել ներգործու
թիւնը անմիջական օգտակար է. քանզի մարդկութիւնը կը վերահա
ստատէ, մարմնին ամեն հիւանդութեանը կը կանոնաւորէ, զգային
գրութիւնը կը զօրացնէ, հիւանդին միտը կը յարգաւ եւ վերա
պէտ առողջութիւնը ձեռք կը բերէ:

Լուսնի գեղահատները ամեն օգտակար գեղերն են հե
տեւեալ հիւանդութեանց համար:

- | | | |
|----------------------------------|----------------|---|
| Շնչադրութիւն, | Թոյացաւութիւն, | Թոքացաւութիւն, |
| Մաշակային ախտ, | Տեսաւստութիւն, | Ցուք որովայնի, |
| Խիթ (սաճէ), | Ջրադրութիւն, | Միզադրութիւն, |
| Հարսութիւն, | Անարողութիւն, | Բորբոքացի, |
| Դիւրաւան ախտ, | Գաւակն, | Ախտ ընդերաց, |
| Թանշ (սօթմ), | Բարակիւն սրտի, | Անկանոնութիւնը կա
խոյլ պարանոցի, |
| Քար կամ խիճ միջա
վերանութիւն, | Նոցի, | Մորթային հիւանդու
լութիւն հիւանդութիւնը Գլխացաւութիւն, |
| | | Թուլութիւն, |
| | | Փողացաւ: |

Այս դեղահատները, որ կը շնորհի Լուսնի բռնկին անձա
կան վերադարձութեամբ, կը վաճառեն իւր գործարանը ի Լա
տոն, Սթրենտ կոչուած թաղը Թիւ 234, ի գին 1 եւ 1 1/2 Լեւ
նի, 2 3/4 եւ 4 1/2 ըզլին տուփը, ըստ մեծութեան տփոց:
Գիտեալ արժան է որ տպեալ հրահանգներ կան ամեն լեզուով,
որոցմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուփին մէջ ի տեղե
կութիւն հիւանդաց, ամեն պարագայից մէջ:

Խմբագիր—տէր Լուսնի,
Պ. Լուսնի Գ. Պալատական:

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ